

Անկախ աուդիտորի հաշվետվությունը**«ՄԻՋԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերերին**

Մեր կողմից իրականացվել է «ՄԻՋԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) 31-ը դեկտեմբերի 2003թ. դրությամբ հաշվապահական հաշվեկշռի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, դրամական հոսքերի և ընդհանուր կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար, կցված 7-ից 33 էջերում, պատասխանատվությունը կրում է Բանկի ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել մեր աուդիտը, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական սխալներ: Աուդիտն իր մեջ ընդգրկում է ընտրանքային եղանակով իրականացված այն վկայությունների ուսումնասիրությունը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարները և հաշիվների բացահայտումները: Աուդիտն ընդգրկում է նաև Բանկի ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

1. 2003թ. առաջին տարին էր, երբ Բանկում իրականացվեց Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան աուդիտ: Այդ իսկ պատճառով էլնելով հաշվետու տարվա գործունեության արդյունքների և դրամական հոսքերի վրա սկզբնական մնացորդների ազդեցության կարևորությունից մենք չենք կարող և չենք արտահայտում կարծիք 2003թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության համադրելիության վերաբերյալ:
2. Բանկը չի ճշգրտել 31 դեկտեմբեր 2003թ. դրությամբ ֆինանսական հաշվետվությունները վարկերի, ինչպես նաև դրանց գծով հաշվեկշռված, բայց չստացված տոկոսների գծով հաշվապահական հաշվեկշռի ամսաքվից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերի արտացոլման նպատակով՝ համաձայն Հաշվապահական Միջազգային Ստանդարտների: Բանկի կողմից նշված ճշգրտումներն արտացոլվել են 2004 թվականի ֆինանսական արդյունքներում: Բանկը պետք է ճշգրտեր պահուստները 2003թ. ֆինանսական հաշվետվություններում, նվազեցնելով իր ակտիվները և համապատասխանաբար հաշվետու տարվա արդյունքն ընդամենը 53,713 հազար դրամ գումարով 31 դեկտեմբեր 2003թ. դրությամբ:
3. Մեզ չհաջողվեց գնահատել սեփականության իրավունքով Բանկին պատկանող՝ այդ քվում գրավի տնօրինման արդյունքում սեփականացված, ընդամենը 489,252 հազար դրամ գումարով սեփականացված անշարժ գույքի իրական արժեքն անկախ գնահատողների եզրակացության բացակայության և ՀՀ-ում անշարժ գույքի շուկայում տիրող անորոշության պատճառով: